ԵՐԵԽԱՆԵՐԻ

իրավունքների պաշտպանության ռազմավարություն

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
Երեխայի խնամքի կենտրոններ	• Աշխատակազմի հետ կապված հարցեր - ըմբռնում - մասնագետների քանակի անբավարարություն և մասնագիտական վերապատրաստումների պակաս[1] - երեխաների հոգևոր և ֆիզիկական պահանջները մնում են չբավարարված միջոցների սղության պատճառով • Շինության անհամապատասխանություն - հաշմանդամ երեխաների համար անհամապատասխան հաստատություններ	• Խնամքի կենտրոններում բռնության դեպքերի մշտադիտարկում • Երեխաների խնամքի այլընտրանքային մեխանիզմների ստեղծմանն ու զարգացմանն ուղղված գործողությունների պակաս • Երեխաների խնամքի հաստատությունները կենտրոնացված չեն ընտանիքի վրա, ինչի հետևանքով պետական բարեփոխումները ձևական բնույթ են կրում	• Խնամքի կենտրոններում գտնվող երեխաների կենսապայմանների ուսումնասիրությանն ուղղված համապատասխան վերահսկողություն • Անբավարար կենսապայման • Ֆիզիկական և հոգեբանական բռնության տեսակների կիրառումը՝ որպես դաստիարակության մեթոդ • Սեռական ոտնձգություն

12 հոգեբան և 13 սոցիալական աշխատող է աշխատում 951 երեխաների համար մանկատներում, հատուկ դպրոցներում՝24 հոգեբան և 1 սոցիալական աշխատող 2314 երեխաների համար [1] *Rapid Assessment of Residential Child Care Institutions 2010*

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
	- գրեթե բոլոր հաստատություններն ունեն վերանորոգման կարիք • Բաշխման խնդիրներ - բնակության վայրերի բացակայության պատճառով երեխաները օրենքով սահմանված տարիքի հասնելուց հետո չեն լքում որոշ հատատություններ - Օրենքով սահմանված տարիքի հասնելուց հետո հաշմանդամություն ունեցող անձանց մեծահասակների համար նախատեսված հաստատություններ տեղափոխելու հետ կապված խնդիրներ - ֆիզիկական և մտավոր խնդիրներ չունեցող երեխաների տեղավորումը ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար նախատեսված հաստատություններում սխալ գնահատման կամ ծնողների սոցիալ-տնտեսական		

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
	խնդիրներից ելնելով, ինչպես նաև նման հաստատություններում երեխաների լավ խնամք ապահովելու վերաբերյալ պատկերացումներով պայմանավորված: • Երեխաներին առնչվող տնական խնդիրներ - երեխաների մեկուսացումը լայն հասարակությունից և հաստատությունները լքելուց հետո վատ սոցիալական ինտեգրումը - Հաստատությունները լքելուց հետո երեխաները բռնության ենթարկվելու տեսանկյունից ավելի խոցելի են լինում • Կրթություն - կրթության ցածր մակարդակ (ներառյալ քրեակատարողական հիմնարկներում, որտեղ կրթական ծրագրերն ավելի սահմանափակ են քան հանրակրթական դպրոցներում)		

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
Դպրոց/կրթություն	• Երեխաների մասնագիտական կողմնորոշման քաղաքականության, գործողությունների պլանի, իրազեկվածության ցածր մակարդակ • Կրթությունից դուրս մնացած երեխաների իրական թվի մասին վիճակագրության բացակայություն	• Դպրոցների կողմից աշակերտական խորհուրդները, որպես ժողովրդավարական կառավարման մեխանիզմ ուժեղացնելու կամքի և հնարավորության բացակայություն • Նախադպրոցական կրթության ցածր որակ, վաղ հասակի զարգացման ծրագրերի անմատչելիություն • Ուսուցիչների վերապատրաստման կոշտ և պահպանողական համակարգ • Կրթական ծրագրերի հետագա զարգացման հետազոտությունների խրախուսում • Հանրակրթական դպրոցները մերժում են այնտեղ ծրագրերի իրականացման հասարակական կազմակերպությունների կողմից արված առաջարկները • Աշակերտների համար չկան արտադպրոցական և ոչ կրթական միջոցառումներ	• Ուսուցիչների կողմից վճարներ պահանջելու և կրթական նյութերի արժեքի հետ կապված աղքատ ընտանիքների համար կրթությունը անմատչելի է • Զգալի անհավասարություն է առկա եղել հարուստների և աղքատների, հարուստ և աղքատ շրջանների կրթության որակի մեջ:
Առողջապահություն		• Դպրոցներում առողջապահության կազմակերպման իրականացման համար պետական անբավարար աջակցություն	• Պետական ծախսերի կրճատման պատճառով առկա է առողջապահական

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
		• Գյուղական դպրոցներում հատկապես սանիտարահիգիենիկ պայմանների բացակայություն • Տարրական հիգիենայի կանոնների վերաբերյալ իրազեկվածության պակաս • Խմելու ջրի պակասը գյուղական համայնքներում • Կրթությունից դուրս մնացած երեխաների իրական թվի մասին վիճակագրության բացակայություն • Մանկական սնուցման ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության անկատարություն	ծառայությունների որակի վատթարացում • Նորածինների շրջանում մահացության դեպքերի աճ • Մայրերի և երեխաների շրջանում թերսնման դեպքերի թվի աճ՝ պայմանավորված սննդի գների արժեքի աճով • Երեխաների շրջանում տուբերկուլիոզի աճի միտում • Մինչև 18 տարեկան անձանց առողջապահության իրականացման անբավարար մակարդակ
Ծննդյան գրանցում			• Ծննդյան չգրանցման դեպքերի աճ է միտվում, ինչպես նաև տնային պայմաններում ծննդաբերության աճ, ինչպես նաև հեռավոր գյուղական համայնքներից ծննդաբերության ժամանակ տեղափոխության

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
			խնդիր է առկա:
Հաշմանդամություն ունեցող երեխաներ		• Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների որակի և հնարավորությունների բարձրացման համար միջոցների բացակայություն • Խոցելի և հատուկ կարիք ունեցող երեխաների համար հնարավորությունների բացակայություն • Հասարակության կողմից ոչ ադեկվատ մոտեցում հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ • Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի բացակայություն • Լսողության խանգարում ունեցող երեխաների զարգացման ցերեկային կենտրոնների բացակայություն	• Հաշմանդամություն ունեցող երեխաների հազվադեպ կարելի է տեսնել հասարակական վայրերում
Ազգային փոքրամասնություններ ի ներկայացուցիչների երեխաներ			• Հանրակրթական դպրոցներում բացակայում են մայրենի լեզվի դասընթացները ազգային փոքրամասնության

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
			ներկայացուչից երեխաների համար, ինչպես նաև իսպառ բացակայում են մանկապարտեզները • Ազգությամբ եզդի երեխաները ծնողների հայեցողությամբ հաճախ չեն ստանում անգամ միջնակարգ կրթություն
Կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների երեխաներ			• Կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների հանդեպ անհանդուժողական վերաբերմունք
Մասնագետներ		• Սոցիալական աշխատողների պակաս Տեղական ինքնակառավարման մարմիններում, հատկապես Խնամակալության և Հոգաբարձության մարմնի կազմում • Սոցիալական աշխատողների մասնագիտական չափորոշիչների բացակայություն:	

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
Երեխաների նկատմամբ սեռական/ ֆիզիկական բռնություն			• Առկա է երեխաների նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնության դեպքերի մեծ քանակություն, որը մասնավորապես արտահայտվում է ոչ նորմալ սննդի, հագուստի և կացարանի ապահովմամբ: Երեխաները հայտնել են նաև, որ տնից դուրս նրանք ևս ենթարկվում են ֆիզիկական և հոգեբանական բռնության հաստատություններում, դպրոցներում, իսկ որոշ դեպքերում նաև փողոցում: • Երեխաների կողմից իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվածության բացակայություն, ինչի պատճառով երեխաների նկատմամբ բռնությունը հասարակության կողմից ընդունելի է դարձնում:

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
			• Սեռական բռնության դեպքեր տարրական դասարանների աշակերտների նկատմամբ • քրեական օրենսգիրքը անհրաժեշտ իրավական բազա չի պարունակում երեխաների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների արդյունավետ կանխման և որակման համար:
Երեխաների թրաֆիքինգ			• Կանանց և աղջիկ երեխաների թրաֆիքինգ սեռական շահագործման և աշխատանքի համար, քիչ քանակի երեխաներ ենթարկվում են ներքին թրաֆիքինգի առևտրային սեռական շահագործման և մուրացիկության համար: Երեխաներն ուղարկվում են նաև Արաբական Միացյալ Էմիրություններ սեռական շահագործման նպատակով:

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
			• Վկաների պաշտպանության մեխանիզմների բացակայության պատճառով դժվարություններ են առաջանում քրեական դատավարության օրենսգրքի դրույթների կիրառման համար:
Երեխաների աշխատանքը		Երեխաների շրջանում ստվերային զբաղվածության և աշխատուժի չարաշահման դեպքեր	• Հայաստանում առկա են երեխաների աշխատանքի ամենավատ տեսակները, ինչպիսիք են աշխատանքը գյուղատնտեսության մեջ, շինարարությունում և այլ տեսակի ծանր ձեռքի աշխատանքները գյուղական համայնքներում, ծաղիկների և նկարների վաճառքը, ինչպես նաև դպրոցից հետո աշխատանքը տեղական շուկաներում: • Երեխաների շահագործումը, որոնք ներառված են գյուղատնտեսական աշխատանքներում և աշխատում են խիստ վտանգավոր

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
			մեքենաների և գործիքների հետ, քարշ են տալիս ծանր բեռներ և այլն: • 7-ից 18 տարեկան երեխաների 6.1 տոկոսը աշխատում են, որը կազմում է մոտավորապես 3500 երեխա, որի մեկ երրորդը գտնվում է օրինականից ցածր տարիքում: • Աշխատանքի կիրառման և երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված դրույթների կիրառման հարցում Աշխատանքի պետական տեսչության ոչ բավարար աշխատանք • Աշխատանքի պետական տեսչությունը երևէ չի ուսումնասիրել և դատարանը երբևէ պատիժ չի նշանակել այն անձի նկատմամբ, ով անօրինական ձևով

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
			աշխատանքային շահագործման է ենթարկել երեխաների
Երեխաների պաշտպանություն		• Երեխաների պաշտպանության ոլորտում համակարգային փոփոխություններ կատարելու պետական պարտավորության բացակայություն • Երեխաների պաշտպանության ոլորտում անկախ դիտարկման մեխանիզմների բացակայություն • Առանց ծնողական խնամքի մնացած, փողոցում հայտնված և բռնության զոհ դարձած՝ ներառյալ սեռական բռնությունը երեխաներին համալիր աջակցության բացակայության	
Թափառաշրջիկ երեխաներ			• Երեխաները հարկադրված են մուրացկանությամբ զբաղվել:
Անչափահասների արդարադատություն	• իրավախախտում կատարած անչափահասների համար նախատեսված ուսումնադաստիարակչական և բժշկադաստիարակչական հաստատությունների, ինչպես նաև հիշյալ հաստատություններ	• Անչափահաս դատապարտյալների համար վերականգնողական ծառայությունների պակաս • պատժի այլընտրանքային ձևերի բացակայություն	• Անչափահասների արդարադատության համակարգի բացակայություն • Նախնական կալանքի խնդրահարույց երկարաձգում և

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
	երեխաներին ուղղորդելու գործընթացը կարգավորված չէ: • Անչափահասների նկատմամբ իրականացվող քրեական վարույթներում համապատասխան մասնագետների ներգրավվածությունն անբավարար է:	• Չնայած իրավիճակի փոփոխությանը ոստիկանությունում անչափահասների հաշվառման շարունակումը • Բռնություն հարցաքննության, նախնական կալանքի և դատաքննության ընթացքում • Անչափահաս ազատազրկվածներին միայնակ պահելու վերացման անհրաժեշտություն	այդ ժամանակահատվածում այցելությունների սահմանափակում • Ազատազրկման կիրառումը ոչ որպես ծայրահեղ միջոց և կատարված հանցանքին դրա ժամկետի անհամաչափություն • Ազատազրկման վայրում պահելու պայմանները և վերականգնողական և վերաինտեգրման միջոցների բացակայությունը
Որդեգրում		• Ընտանեկան օրենսգրքում օտարերկրացիների կողմից որդեգրման դեպքերի գրանցման հետ կապված • Օրենքով որդեգրման համար պահանջվում է, որ երեխան լինի առանց ծնողական խնամքի մնացած (իրականում շատ են դեպքերը երբ երեխան որդեգրվելու հնարարորություն չի ունենում քանի որ պաշտոնապես առանց ծնողական խնամքի մնացածի կարգավիճակ չունի, սակայն փաստացի զուրկ է ծնողական խնամքից):	

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
		• Որդեգրումը գաղտնի է, բարձրացվում է հարց ներքին աշխատանքների իրականացման և երեխային որդեգրման պատրաստմանն ուղղված աշխատանքների բացակայության մասին • Որդեգրման մասին օրենքը որևէ միջոց չի նախատեսում նոր ծնողների ուսուցման կամ հնարավորությունների ավելացման համար	
Խնամակալ ընտանիք/այլընտրանքային խնամք	• Ընդամենը 25 երեխա է մանկատներից տեղափոխվել խնամատար ընտանիքներ, չնայած այն հանգամանքի, որ միջազգային փորձը վկայում է, որ խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացումը շատ ավելի արդյունավետ է և ֆինանսական տեսանկյունից և այն տեսանկյունից, որ երեխան ապրում է ընտանիքում.		

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
Խնամակալության խնդիրներ	• Շատ դեպքերում դատարանի կողմից երեխաների խնամքից զրկված ծնողի կողմից երեխաներին այցելելու իրավունքի սահմանելուց հետո երեխաները հրաժարվում են տեսակցել հոր կամ մոր հետ: Այս դեպքերում դատարանի որոշման կատարումն ԴԱՀԿ ծառայության կողմից իրականացվում է ոչ պատշաճ ձևով:	• Խնամք և պաշտպանություն իրականացնող պետական և ոչ պետական հաստատությունների բեռնաթափման գործընթացի անարդյունավետություն: • Այլընտրանքային խնամքի ձևերի անհամաչափ զարգացում և կիրառում:	
Ալիմենտ	• Որոշ ծնողներ ալիմենտ վճարելու համար չեն ունենում եկամուտի աղբյուր և եթե անգամ առկա է դատարանի վճռիռ, միևնույն է ԴԱՀԿ-ն չի կարողանում գանձել այդ գումարը: Արդյունքում խախտվում է երեխայի իրավունքը և պետությունը ևս չի կրում ալիմենտի վճարման պարտականություն:		
Ծնողներ		• Ծնողների աջակցման/վերապատրաստման դասընթացների պակաս • Ծնողների մասնակցության և ներգրավածության պակաս երեխաների խնամքի և կրթության	

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
		իրականացման հարցում	
Երեխաների մասնակցությունը	• 10 տարեկանից ցածր երեխաների կարծիքը հաշվի չի առնվում դատական ատյաններում որոշումներ կայացնելիս	• Տեղական ինքնակառավարման և պետական մակարդակով կայացվող որոշումներին երեխաների մասնակցությունը ապահովող օրենսդրական ակտերի անբավարարություն • Երեխաների մասնակցությունը ապահովող սոցիալական նորմերի բացակայություն	
Աղքատություն		• Երեխաների աղքատության դեմ պայքարի մեխանիզմների բացակայություն • Գյուղական տնտեսությունների համար էժան ագրոբիզնեսի ստեղծման հնարավորություններ	

Ոլորտի խնդրահարույց հարցերը	Պաշտպանի աշխատակազմի կողմից ստացված/բարձրացված խնդիրներ	Հասարակական կազմակերպությունների կողմից վեր հանված խնդիրներ	Միջազգային զեկույցներ
Կառավարության թերացումները		• Պետական պաշտոնյաների տեղեկացվածության պակասի և կաշառակերության պատճառով անհարկի ձգձգումներ • Կառավարության կողմից հետազոտությունների արդյունքներին ծանոթացման հետ կապված թերացումներ • Կառավարության կողմից նորարար մոտեցումների, որոշումներ կայացնելիս հասարակական կազմակերպությունների և միջազգային հանրության հետ խորհրդակցելու բացակայություն • Երեխաների պաշտպանության բաժնի աշխատանքների անարդյունավետություն, որը պատշաճ կերպով չի իրականացնում ծրագրերի իրականացումը և դեպքերի ուսումնասիրումը	

Ռազմավարական նպատակները.

Համապատասխան քայլեր ձեռնարկել՝

1. **Երեխայի խնամքի կենտրոններ.** հստակեցնելու համար երեխաների խնամքին առաջադրվող պահանջները խնամքի կենտրոններում, ինչպես նաև լուշելու համար ՄԻՊ-ի և ՀԿ-ների կողմից առաջադրված խնդիրները.

2. **Կրթություն/դպրոցներ.** ապահովելու համար կրթության մատչելիությունը և որակը, հատկապես մարզերում.

3. **Առողջապահություն.** երեխաների առողջպահության համակարգի զարգացմանը, հատկապես մարզերում.

4. **Հաշմանդամություն ունեցող երեխաներ.** հաշմանդամություն ունեցող երեխաների կյանքի պայմանների և կրթության որակի բարելավմանն ուղղված.

5. **Ազգային և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների երեխաներ.**լրացնելու համար օրենսդրական բացերը, ապահովելու համար ազգային և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների համար հանրային կյանքի բոլոր ոլորտների մատչելիությունը.

6. **Մասնագետներ.** երեխաների հետ աշխատող մասնագետների՝ մասնավորապես սոցիալական աշխատողների քանակի և որոկի ավելացմանն ուղղված

7. **Սեռական/ֆիզիկական բռնություն երեխաների հանդեպ.** կանխելու համար Սեռական/ֆիզիկական բռնությունը երեխաների հանդեպ

8. **Երեխաների թրաֆիքինգ.** բարենպաստ միջավայրի ստեղծման համար՝ նպատակ ունենալով կանխարգելել թրաֆիգինգի հավանականությունը

9. **Երեխաների աշխատանք.** երեխաների աշխատանքի դեմ ուղղված գործողությունների իրականացման համար

10. **Երեխաների պաշտպանություն.** Երեխաների պաշտպանության բաժինների և երեխաների իրավունքների պաշտպանություն իրականացնող այլ պետական մարմինների զարգացմանը աջակցելու համար

11. **Թափառաշրջիկ/մուրացիկ երեխաներ.** նվազեցնելու համար մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների քանակը՝ համագործակցելով համապատասխան պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ

12. **Անչափահասների արդարադատություն.** օրենսդրական բացերի վերացմանն և գոյություն ունեցող իրավական ակտերի կիրառմանը ուղղված, զարգացնելու համար անչափահասների արդարադատության համակարգը.

13. **Որդեգրում/խնամատար ընտանիք.** օրենսդրական բացերը լրացնելու համար, կապված որդեգրման գործընթացի և խնամատար ընտանիքի հետ, ինչպես նաև բեռնաթափման խնդրին ուղղված.

14. **Երեխաների մասնակցություն.** հանրային կյանքի տարբեր ոլորտներում երեխաների մասնակցությունը ապահովելու համար

15. **Կառավարության անգործություն.** այն պետական մարմինների կայացմանը աջակցելու համար, որոնք առնչվում են երեխաների դեպքերի հետ, ներառյալ համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ

16. **Իրազեկվածություն.** երեխաների և հասարակության ներկայացուցիչների իրազեկվածությունը երեխայի իրավունքների մասին բարձրացնելու համար

17. **Միջազգային պարտավորություններ:** համապատասխանեցնելու համար ներպետական օրենսդրությունը ՄԱԿ-ի Երեխաների մասին կոնվենցիայի դրույթների պահանջներին.